ների մասնակցութիւնը Գրիգոր Անաւարզեցու դէմ գրուած թղթին տեսանք վերև. բայց այդ մասնակցութիւնը շարունակւում է և յետոյ Կոստանդին կաթուղիկոսին ուղարկած թղթում. իշխանների և ազատների ստորագրութիւնն այստեղ չկայ, բայց 1317/8 թուին Օրբէլեանների իշխանապետն էր Բուրթէլ, իսկ Պռոշեանններինը Էաչի կամ նորա որդին Հասան Բ., նայելով, թէ առաքման ճիշդ տարեթիւն ու ամսաթիւը երբ էր։ Իսկ Կիլիկիայում Հեթում Բ.ի պաշտպանողական դերը շարունակում են Օշին թագաւորը և նորա մահուանից յետոյ Օշին պայլ, Կոռիկոսի տէրը, իւր որդի Հեթումի հետ. այս վերջինները յատուկ թուղթ ունին գրած Եսայի Նչեցուն, որ կորած է, բայց կարելի է բովանդակութեան մասին գաղափար կազմել պատասխանից։ Նչեցու թուղթն ուղղուած է «Քրիստոսիւ զօրացլ., ամ. քջութ. և իմաստութբ. թագժոնգ. զարմի ծնունդ, գունդ և կողմնկլ. բլր. մասինդ Սօվրիոյ և ի վեհից մծ.անիստ շինլ. տանդ Տարսոնի պր. Հեթում, պր. պայլ և մարզպան ամ. Հայոց Օշին, ի նուաստ Եսայեայ ի սպսւր. բանին»(*)։ Պատասխանից երեւում է, որ վէճը երեք հարցի շուրջն է պտըտւում. մարդեղութեան, այսինքն մի՞, թէ երկու բնութեան, բաժակի անապականութեան, թէ ջրախառն լինելու, և ծննդեան ու մկրտութեան տօները միասին կատարելու մասին։ Նչեցին յայտնում է, թէ դա հին վէճ է հայոց, յունաց և լատինների մէջ Իննովկենտիոս (երկրորդ) պապից սկսած, «որ ՇՁ (= 1131) թուին հայոց գրեաց առ Գրիգորիոս եղբօր Ներսեսի զնոյն խնդիր, բայց ոչ նովին թխտով, թէպտ. և նկրագրով և նրին. վկայութ., զորս ձերս ունէր», որի պատճէնն ունինք մեզ մօտ։ Այս նախաբանից յետոյ Նչեցին մի առ մի մէջ է բերում յարուցուած խնդիրները և հարկաւոր բացատրութիւնները տալիս(*)։

Արեւելեան վարդապետները ոչ միայն ստիպուած էին ունիթոռական շարժման գլուխ կանգնած կաթուղիկոսների, եպիսկոպոսների և իշխանների դէմ մաքառիլ, այլ և զգուշացնել ժողովրդին լատին քարոզիչների և նրանց հետեւող հայ միաբանների դէմ, որոնք այս ժամանակ երեւան են գալիս արեւելեան Հայաստանում և բուռն գործունէութիւն սկսում այստեղ։ Ե՞րբ են նրանք հաստատուել արեւելեան Հայաստանում, ճիշդ ժամանակը չգիտենք. Նրանց ձեռքով կատարուած ամենահին թարգմանութիւնը՝ «Գիրք մոլութեց. եւ ժ. բանեան հրամանաց» կրում է 1320 թուականը. յիշատակարանից տեղեկանում ենք, որ կատարուած է Ֆրա Պետրոսի ձեռքով, ազգով հայ Ֆրա Յակոբոսի օգնութեամբ, վերին Քռնայի վանքում, Յովհաննէս վարդապետի առաջնորդութեան ժամանակ։ Նման յիշատակարան, գրեթէ, բառացի կրկնւում է այս շրջանի ունիթոռական բոլոր թարգմանութիւնների վերջում, ուստի և անհնարին չէ, որ յետին թուով յաւելուած լինի, ինչ որ Քռնային և Յովհաննէս Քռնեցուն է վերաբերում, մանաւանդ «հիմնարկօղ կրդց. միաբանից» արտայայտութիւնը երկար տարիների գործունէութեան հետեւանքն է մատնանշում։ Քռնայի վանքը (Երնջակում, Ապրակունիսից ոչ հեռու միաբանական գործունէութեան կեդրոն դարձաւ նշանակուած թուականից աւելի յետոյ, հաւանօրէն, 1330 թուին, երբ Բարդուղիմէոս Բոլոնիացին հաստատուեց այնտեղ Քռնեցու հրաւէրով. բայց նա իւր գործունէութիւնն սկսել էր աւելի վաղ՝ Մարաղայից, ուր քարոզում էր պարսից լեզ-

---

ջօրդ «աղբաւրորդին զտէր Տիրացուն», այլ և իւր հարազատ եղբայրները Պետրոս և Սարգիս, որոնք նիւթապէս նպաստել են շինութեանը (Շահխ. 350. և Արարատ 1898. 89. յօդուած Խ. Վ.ի)։

Այս մասին տեղեկութիւն է տալիս և Սամուէլ Անեցու շարունակողը (հրատ. Էջմ. 1898. 157). ՌՅԻ (= 1320)։ «Ի ՉԿԸ թվին եղև ահագին շարժ յարևելս. և զԹադէոս առաքելոյն վանքն և զեկեղեցին կործանեաց՝ և զտունն փլոյց և ՀԵ (= 75) ոգի եսպան, զոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին և զվանքն տէր Զաքարէ»։

Նորա շինարարութեան մասին տեղեկութիւն ունինք եւ յետին ժամանակների վկայութեամբ. Թադէոս առաքեալի վանքի վանահայրն էր 1677 թուին Իսահակ վարդապետ (եպիսկոպոս) Մակուեցին, Յակոբ Դ. կաթուղիկոսի աշակերտներից, որ իւր ստացած Հարցմանց գրքի յիշատակարանում ի միջի այլոց գրում է. «յետ երեք տասան ամի առաջնորդութե. մերոյ, և ի թվկնիս. մերում ՌՃԻԸ երորդի եղև գիւտ ջրմղին, որ ասի Կառնուտի, զոր յառաջ. ժմկս. բերել. էր մեծն Զաքարիա եպսն. պարոն Էմանուէլի որդի, երկց. անգամ ի հիմանէ շինօղ սբ. եկեղեցւոյս, և էր քակտել. և աւերել. և հազիւ ուրեք ուրեք նշմարանք մնացել.։ Այլ այժմ շնորհօքն այ. կրկին նորոգց. և յորդառուխ աղբիւրն բերել. ածաւ ի մէջ վանիցս և գեղջս, հոգաբարձութ. Սարգիս վրդպտի. կաֆայեցւոյ». Ձեռ. Էջմ. № 843/808, 489ա.։

Նորա մահուան տարեթիւը մեզ յայտնի չէ, բայց կենդանի էր դեռ ևս 1336 թուին, երբ «ի մայրաքաղաքս Թավրէժ ընդ հովանեաւ մաւրն լուսոյ տիրամաւր Աճածնին եւ և Սրբոյն Սարգսի զաւրավորին», «յեպիսկոպոսութե. սրբոյ առաքելոյն Թադէոսի տր. Զաքարիայի և տր. Տիրացուի, հեզոց և հանդարտաց և բարեսիրաց», գրուել է Թումա գրչի ձեռքով մի բոլորգիր աւետարան, թղթի վրայ, Նախաթունի ստացմամբ, որի որդիքն են Ազիզբէկ և Թաւաքալի։ Գրչութեան ժամանակն է «ՉՁԵ յամսե. արեգ ժէ» (Ձեռ. Էջմ. № 1376 նժ.)։

(*) Այդ թուղթը տ. Արարատ, 1893, 133. յօդուած Ա. Տէր Միքէլեանի։

(*) Ձեռ. Էջմ. № 524/573, 321բ.։ Թղթի վերնագիրն է. «Երջանիկ բաբունոյն Եսայեա ասացլ. վս. զաւանութե. հւոյ. ընդդէմ պրն. Հեթմոյ Կոռիկոսցոյն. պատասխանի թխտոյն», որ յետոյ է աւելացրած և ոչ հեղինակի կողմից։ Օշինը պայլ տիտղոսն ստացաւ ՉԿԹ (= 1320) թուին, երբ Օշին թագաւորը մեռնելիս իւր մանուկ Լեւոն որդուն յանձնեց նորա խնամակալութիւնը (Սմբատ սպարապետի ժամանակագրութեան շարունակողը, Մոսկուա, 1856, 120, 122։ Նաև Սամ. Անեցու շարունակողը եր. 157, Էջմ.ի հրատ.). մի տարի յետոյ Օշին պայլը Լեւոնին ամուսնացրեց իւր աղջկայ հետ։ Օշին պայլի որդին՝ Հեթումը վախճանուեց ՉՀԴ (= 1325) թուին. ուրեմն այս թուղթը գրուած է 1320-1325 թ.թ., հաւանօրէն, 1321 թուին։ Ձեռագիրը գրուած է Թովմա Կաֆայեցու ձեռքով, որ Մխիթար Տաթեւացու աշակերտն էր, 162ա.։